ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-31-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները՝

1. **Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հետ կապված աշխատանքներ, մասնավորապես.**

   - Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման շրջանակում համակարգել եմ համապատասխան աշխատանքները, աջակցություն ցուցաբերել ծրագրի մշակումը իրականացնող «Ամերիա» ՓԲԸ-ի թիմին: Կազմակերպվել է 2 հանդիպում ծրագրի մշակման թիմի և շահագրգիռ պետական մարմինների միջև՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը և նպաստելով աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, ինչպես նաև որոշումների օպերատիվ կայացմանը:

   - Հաշվետու ժամանակահատվածում ներգրավված եմ եղել ՀՀ փոխվարչապետի գրասենյակի համակարգմամբ ձևավորված Տնտեսական փոխակերպման և կայուն զարգացման ռազմավարության մշակման աշխատանքային խմբի աշխատանքներում: Մասնակցել եմ խմբի աշխատանքային հանդիպումներին և ներկայացրել առաջարկություններ ռազմավարության տեսլականի և արդյունքային շրջանակի վերաբերյալ:

2. **«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի կիրարկումն ապահովող աշխատանքներ, մասնավորապես.**

   - Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության թիմի հետ համագործակցությամբ համակարգել եմ աշխատանքները՝ ուղղված 2025 թվականի 4-րդ եռամսյակի բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության

ընտրանքային ստուգումներին և աջակցության առցանց հաշվարկի համակարգի կատարելագործմանը:

- Ներկայացրել եմ առաջարկություններ օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունների և լրացումների վերաբերյալ՝ ուղղված կարգավորումների հստակեցմանը, գործընթացների բարելավմանը և թվային օպտիմալացմանը, իրավական բացերի վերացմանը, ինչպես նաև շահագրգիռ կողմերից ստացված առաջարկությունների համակարգված հասցեագրմանը:

3. **Գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների (R&D) աշխատանքները որպես այդպիսին որակելու աշխատանքների գործընթացին աջակցություն.**

- Կատարել եմ որպես այդպիսին ճանաչված R&D աշխատանքներին վերաբերող տեղեկությունների հավաքագրում և վերլուծություն:

4. **Այլ աշխատանքներ**

- Հավաքագրել, մշակել և նախարարության աշխատակիցներին տրամադրել եմ նրանց կողմից պահանջված տեղեկատվությունը:

- Պատասխանել եմ ոլորտի կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ստացված գրավոր հարցումներին և դիմումներին:

- Պատասխանել եմ շահառու կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված հեռախոսազանգերին՝ տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություն:

- Կատարել եմ մի շարք այլ ընթացիկ աշխատանքներ:

ՏԷՋ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ _____ ԼՈՒՍԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ստորագրություն

«31» մարտ 2026թ.

Հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքները գնահատում եմ «գերազանց»

_____ ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ
անմիջական ղեկավարի ստորագրություն

«31» մարտ 2026թ.